«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Կնոջ կերպարը և հոգեբանության բացահայտումը հայ գրականության մեջ

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Արմինե Շուշանյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Աղբերք գյուղի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ----------2
2. Կնոջ կերպարը և հոգեբանության բացահայտումը հայ գրականության մեջ -------3
3. Կինը քրիստոնեության մեջ ----------4
4. Կանանց իրավունքները Ղազարոս Աղայանի ստեղծագործությունների մեջ --------5
5. Կինը՝ «Սասնա ծռեր» էպոսում ----------6
6. Կանանց կերպարները Զոհրապի նորավեպերում ----------7
7. Կնոջ ազատագրության Ռաֆֆիական ըմբռնումները ----------13
8. Սառայի կերպարի արդիական վերլուծությունը «Սպանված աղավնի» վիպակում -14
9. Եզրակացություն----------17
10. Օգտագործված գրականության ցանկ---------- 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային մշակույթի ստեղծման ներշնչանքի առանցքային գործոններից մեկը հնագույն ժամանակներից ի վեր եղել է կինը: Նա ընկալվելէ թե՛ որպես կյանքն իր մեջ կրող ու պարգեւող քարանձավ, ջրհոր, ակնաղբյուր, անոթ եւ թե՛ այդ կյանքը պահպանող ու սնուցող առեղծվածային այն էակը, որն օժտված է ներըմբռնողությամբ, նրբազգացությամբ, քնքշությամբ, անմնացորդ սիրով ու նաև փոփոխական հուզականությամբ: Նա մշտապես ակնածանքի է արժանացել ինչպես իր կանացի տկարությամբ, նույնքան էլ աներևակայելի զորեղությամբ, մանավանդ եթե խոսքը վերաբերում է իր զավակի կամ սիրեցյալի պաշտպանությանը: Այստեղ չի կարելի բացառել նաև կնոջ պլաստիկ ձևերի գրավչությունը: Այս բարդ ու հակասական, հաճախ անկանխատեսելի էակը եղել է, կա ու մնում է որպես կյանքի հավերժագո շարժիչ ուժը. կնոջն են միայն հասու մայրության անպարտելի ոգու իշխանությունը և երկունքի ցավի երկակի զգացողությունը՝ որքան տառապալից, նույնքան և քաղցր: Տղամարդը կնոջ մեջ է տեսել կյանքի հանդեպ իր սիրո ու մաքառումի իրական կիրքը, ընկնելու և բարձրանալու իր "պտուտաձողը": Հանուն կնոջ՝ վերելքներ են ապրել ու ճգնաժամի հասել երկրներ, կառուցվել ու կործանվել քաղաքներ ու դղյակներ, արարվել կերպարվեստի գլուխգործոցներ, գրական ու երաժշտական գոհարներ... Հայ իրականության մեջ վաղնջական ժամանակներից ի վեր մշտապես մեծարվել է կինը: Նա եղել է սիրո, մաքրության, մայրության խորհրդանիշը, գնահատվել ու փայփայվել է՝ որպես անկոտրում նվիրումի, ընտանիքի ամրության ու հավատարմության մարմնացում: Մեզ հասած հայկական մշակութային ժառանգության մեջ համենայն դեպս չի պահպանվել բախտախնդիր կնոջ ոչ մի կերպար, ոչ մի անուն: Նույնիսկ հայկական դիցարանից մեզ հասած աստվածուհիները եղել են միայն մայրության ու սիրո հովանավորներ: Հայոց պատմությունը մեզ թողել է նաև հայ կնոջ հայրենասիրության ու ազգային արժեքներին անմնացորդ նվիրվելու սքանչելի օրինակներ: Հիշենք թեկուզ Եղիշեի Վարդանանց պատմության այն դրվագը, որում պատմիչը գրում է, թե ինչպես հայոց աշխարհի փափկասուն տիկինները "Մոռացան իրենց կանացի տկարությունը եւ առաքինի տղամարդիկ դարձան հոգևոր պատերազմի մեջ..."՝ կանգնելով իրենց ամուսինների կողքին. այդ կանանց մենք տեսնում ենք նաև մեր պատմության հետագա անցքերում, տեսնում ոչ միայն թշնամու դեմ մղած պատերազմներում, այլև քաղաքաշինության ու հայրենաշինության ակունքներում, մշակութային արժեքների ստեղծման ու պահպանման

գործում: Իսկապես հայ կնոջ հոգևոր ու բարոյական կերտվածքը պարտավորեցնող է: Նրան ենք պարտական մեր անզուգական քնարերգության ու կերպարվեստի գլուխգործոցների, գուսանական ու ժողովրդական անկրկնելի երգերի ու տաղերի համար:

Կնոջ կերպարը և հոգեբանության բացահայտումը հայ գրականության մեջ

Դեռ հեթանոսական ժամանակներից կինը հայերի մոտ համարվում էր ընտանիքի հիմքը: Դրա վկայությունն են մեզ հասած բանաստեղծական պատառիկները, լեգենդներն ու աղքատիկ պատմական վկայությունները: Հայ պատմիչ Ագաթանգեղոսի վկայությամբ՝ նախաքրիստոնեական շրջանում հայ կնոջը վերաբերվել են որպես «մայր աղբյուր», «կենսատու», «շունչ և կյանք»: Հեթանոսական դիցարանում կարևոր դեր էին խաղում Անահիտ, Աստղիկ և Նանե աստվածները: Ընդ որում՝ Անահիտը գլխավոր աստվածներից մեկն էր՝ Արամազդի դուստրը: Առավել վաղ շրջանում Անահիտը ռազմի աստվածն էր՝ անուղղակի վկայելով, որ վաղ ստրկատիրական շրջանում հայ կանայք մասնակցել են ռազմական գործողություններին, գուցեն՝ ոչ երկրորդական դերով: Հասարակական հարաբերությունների զարգացման հետևանքով Անահիտ աստվածուհուն վերապահվում է ավելի կանացի դեր. նա դառնում է պտղաբերության, արգասավորության և ծննդաբերության աստվածը:

Քրիստոնեության մուտքից հետո կնոջ պաշտամունքն արտահայտվել է Աստվածամոր կերպարով: Շատերի կարծիքով՝ Աստվածամոր կերպարը հայկական իրականությունում հենց Անահիտի վերանվանված ու վերափոխված կերպարն է:

Կինը քրիստոնեության մեջ

Քրիստոնեությունը կնոջը վեր հանեց ավելի բարձր հեղինակության, ինչը չենք կարող տեսնել այլ կրոններում կամ մարդկային պատմության անցյալի մեջ: Որոշ կրոնների հետևող հասարակությունների մեջ կինը երկրորդական կամ երրորդական տեղում է, ինչպես օրինակ իսլամի կամ բուդդիզմի մեջ: Բուդդայականության մեջ նույնիսկ կնոջ նկատմամբ շեշտված թշնամական վերաբերմունք կա: Կինը տանջանքներով լի նյութական աշխարհի՝ սանսարայի մարմնացումն է: Դրա համար էլ բուդդայականությունը կնոջը փրկություն չի խոստանում. փրկության համար կինը պետք է վերածնվի որպես տղամարդ: Այս կրոնը կնոջը դատապարտում է տղամարդուն իր հետ ամուր կապելու և դրանով նրա փրկությանը խանգարելու համար: Բուդդայականության շատ հետևորդների կարծիքով ընտանիքի հետ կապերը չխզած տղամարդը չի կարող փրկվել: Դրա օրինակը Բուդդան է, ով թողեց իր ընտանիքը: Իսլամի մեջ կատարյալ կնոջ կերպար է համարվում Հիսուսի մայր Մարիամը, բայց, այնուամենայնիվ, բազմակնության ընդունումը կնոջը ստորակարգ էակ է դարձնում: Մինչդեռ քրիստոնեությունը, շեշտելով տղամարդու գլխավորող դերը, միևնույն ժամանակ չի նսեմացնում կնոջ դերը: Քրիստոնյաների ամենամեծ սուրբն է Մարիամ Աստվածածինը: Բացի դրանից Քրիստոս և՛ Ծննդյան, և՛ Հարության ժամանակ առաջինը հենց կանանց հայտնվեց: Պողոս առաքյալն ասում է, որ Քրիստոսով խտրություն չկա տղամարդու և կնոջ միջև: Բայց առաքյալը նաև ասում է, որ տղամարդն է կնոջ գլուխը, ինչպես Քրիստոս գլուխն է Եկեղեցու: Ինչպե՞ս կարող ենք հասկանալ այս հակասությունը առաքյալի խոսքերի միջև: Մարդու գլխավորության մասին շեշտադրումը անցյալի հասկացությունների կրկնությունը չէ, որոնց համաձայն մարդը ղեկավարն է, իսկ կինը՝ նրա ենթական: Ընդհակառակը, քրիստոնեական տեսակետի համաձայն՝ տղամարդու գլուխ լինելը նշանակում է հոգատարություն, քնքշություն կանանց հանդեպ և աջակցություն նրանց: Ճիշտ է, Քրիստոսով խտրականություն չկա տղամարդու և կնոջ միջև, սակայն կինը և տղամարդը նույնը չեն: Կան բաներ, որ կինը երբեք չի կարող անել տղամարդու փոխարեն, և կան բաներ, որ տղամարդը երբեք չի կարող իրագործել կնոջ փոխարեն: Ճիշտ է ասված, որ եթե կինը գոյություն չունենար, մենք զրկված կլինեինք ուրախությունից մեր կյանքի սկզբում, հաճույքից՝ մեր կյանքի ընթացքում և

մխիթարությունից՝ մեր կյանքի վերջում: Եվ այս կարծիքն ընդունելի է, որովհետև մարդկանցից ոչ ոք չի կարող մխիթարել այնպես, ինչպես կանայք, քույրերը և մայրերը՝ կնոջ հոգուն հատուկ բարիության ու զգացմունքայնության շնորհիվ: Եվ բանաստեղծը մեծ իմաստությամբ է ասել, որ մեր առաջին արցունքները սրբվում են կնոջ կողմից, և մեր առաջին բառերը սովորում ենք կանանց շուրթերից:

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Ղազարոս Աղայանի, բոլորիս հայտնի «Անահիտ» հեքիաթը, հասարակության մեջ կնոջ ուժի և իմաստության արժևորման լավագույն օրինակներից մեկն է:

Գեղջկուհի հասարակ աղջիկ Անահիտը հեքիաթում դառնում է հայ կնոջ հիանալի կերպար: Անահիտն իմաստուն է ու խելացի, աշխատասեր ու առաքինի: Ժողովրդի վիճակով մտահոգված Անահիտի բարոյական կերպարին զուգահեռ հեղինակը տվել է նրան մարտական և քաջության բնորոշումներ: Դրանք հաստատում են Ղազարոս Աղայանի այն առաջադիմական հայացքը, որ կինը նույնպես կարող է հասարակական կյանքում տղամարդուն հավասար դեր ունենալ:

Աղայանի ստեղծած գեղարվեստական արձակում միշտ շեշտվել է կնոջ ազատության, կրթության, աշխատելու իրավունքի խնդիրը:

Աղայանը նաև անդրադառնում է հասարակության մեջ առկա ու այդ շրջանում տաբու համարվող թեմաներին՝ ընտանեկան բռնությանն ու հասարակական կարծիքի, կարծրատիպերի կործանարար հետևանքներին: «Երկու քույր» վեպում, Աղայանը խորությամբ է ներկայացրել գյուղական կնոջ հոգեկան ապրումները՝ ցույց տալով նրա ճնշված վիճակն ընտանիքում, և թե ինչպես է հասարակական կործանարար կարծիքը ազդում նրա ճակատագրի վրա:

Այս վեպը հայ արձակի առաջին դրսևորումներից էր, որտեղ կնոջ՝ իրավազուրկ վիճակից դուրս գալու հարցը դարձավ գերխնդիր:

Վեպի երկու քույրերից մեկը՝ Հերիքնազն առաջին կին կերպարն է արևելահայ արձակում, որը համարձակորեն կոտրում է հասարակական կարծիքի ու ավանդույթի շղթաները՝ իր երկխոսություններում հաստատելով կնոջ ազատության բնական իրավունքը:

Վեպում Հերիքնազի կերպարն, ի տարբերություն գյուղի մյուս աղջիկների, ըմբոստ է, նա կռվում է տղաների դեմ, «տղի գդակ» է դնում և զենք ունի: Կնոջն այսկերպ կերպավորելով՝ Աղայանը անուղղակիորեն բարձրացրել է կնոջ ինքնապաշտպանության իրավունքի, սեփական ընտրություն կատարելու և որոշումներ կայացնելու հնարավորության հարցը:

Կինը՝ «Սասնա Ծռեր» էպոսում

Եթե ուշադիր կարդանք «Սասնա Ծռեր» էպոսը, ապա կնկատենք, որ նրանում կնոջ դերը գերակայում է: Էպոսը սկիզբ է առնում Ծովինարով, ով, հոիանալով ջրից, ծնում է Սանասարին և Բաղդասարին: Ծովինարը դառնում է սերնդի սկիզբը, այսինքն՝ էպոսի նախամայրը, իսկ նախահայրը այս դեպքում ջուրն է: Էպոսում Ծովինարը մարմնավորում է հայ կնոջ գեղեցկությունը և արիությունը, ով պատրաստ է զնալու ինքնազոհության, իր ազգը փրկելու համար: էպոսում Ծովինարին հաջորդող քաջ ու արի կնոջ կերպարը Սանասարի կնոջ՝ Դեղձուն Ծամի կերպարն է, ով ինքն է ընտրում իր ամուսնուն, և կարողանում է գրավել նրան, իր գեղեցկությամբ և խելքով: Էպոսի երրորդ սյունը Արմաղանն է,՝ Մհերի կինը: Նա ամուսնու հետ միասին ղեկավարում էր Սասունը: Եվ վերջում համաձայնում է զոհաբերվել՝ հանուն իր որդու՝ ազգի ու նրա առաջնորդի, հանուն տոհմի շարունակության ու իր երկրի հզորացման: Դավթի

կինը՝ Խանդութը քաջ, խելացի ու հավատարիմ՝ հայ կնոջ կերպար է: Նա իր խելքով և քաջությամբ ամուսնուն չէր զիջում, և ամուսնու մահից հետո իրեն ժայռից ցած է նետում: Էպոսի վերջին կին հերոսը Գոհարն էր, Փոքր Մհերի կինը, ում մահվանն ականատես եղավ Փոքր Մհերը: Ստացվում է, որ էպոսում կանայք ոչ պակաս հերոսներ ու զորավարներ էին: Էպոսում ամբողջացվում է մայրիշխանությունը, և հայերիս կողմից կին էակի սրբազնացումը: Էպոսի կանայք իրենց խելքով և քաջությամբ, ոչ միայն չեն զիջում էպոսի քաջ հերոսներին այլև ավելի մեծ նշանակություն ունեին էպոսում, քան հենց իրենք՝ հերոսները: Չէ՞ որ կինն է սերննդի շարունակողը, և նա է լույս աշխարհ բերում նրանց,

ովքեր հետո պիտի պաշտպանեն երկիրը: Կինը հող է, որի վրա են աճում բոլոր բարիքները, առանց որի կյանք լինել պարզապես չի կարող:

Կանանց կերպարները էպոսում հակասական են. կան և՛ ըմբոստ կանայք և՛ անձնազոհ: Հայ կնոջ մեջ նստած է այդ անձնազոհ կերպարը և ինչքան էլ տղամարդը լինի տան գլուխը՝ կինը տան պարանոցն է, և որ կողմ պարանոցը ուզի, այդ կողմ էլ գլուխը կշարժվի:

Կանանց կերպարները Զոհրապի նորավեպերում

Գ.Զոհրապի նորավեպերի կերպարների զգալի մասը կանայք են՝ ամեն դասից և խավից: Դրանցով, անտարակույս, նա մեծ նորություն է բերել մեր գրականության մեջ, հարստացրել է մեր գրականության կին կերպարների պատկերասրահը: Կանանց կերպարների միջոցով հեղինակը լուսաբանում է ժամանակի կյանքի ճահճացումը, բարքերի անկումը, բուրժուական հասարակության բարոյական և մտավոր խղճուկությունը, աշխատավոր կնոջ դառը վիճակը, լուսաբանում է այն ծանր դրությունը, որի մեջ ամեն մեկը յուրովի դժբախտ էր. աշխատավոր կինը տառապում էր աղքատության ճիրաններում, ոտնահարվում են նրա մարդկային տարրական իրավունքները, իսկ վերնախավի կինը՝ զուրկ ինքնուրույնությունից, բռնադատված սահմանափակ դերի համար, մեծ մասամբ դժբախտ՝ սառը հաշվի վրա հիմնված անհամապատասխան ամուսնության, զգում էր անբավարարվածություն այդ դրության մեջ, որից ամեն մեկը ջանում էր յուրատեսակ ելք գտնել՝ մեկն իր գեղեցկությունը չկորցրած մեռնելու մեջ, մյուսը կառչում էր հավատքին, մի ուրիշը ձյան պես փռվում <<անցորդի>> գարշապարի տակ, ոմանք լռեցնում էին իրենց սրտի ձայնը և հոգեպես տառապում, շատերը կերակրվում էին բամբասանքներով և այլն:

Եթե Շիրվանզադեն կնոջ ֆենոմենը քննում է սոցիալ-հոգեբանորեն, ապա Զոհրապը նախընտրում է հոգեբանական վերլուծությունը: Նրա նովելներից յուրաքանչյուրը փորձնական հոգեբանության մի կատարյալ նմուշ է, ուր գեղարվեստը ձգտում է գիտության: Զոհրապի հերոսուհիները գրեթե դուրս են սոցիալական, հասարակական և նույնիսկ՝ բարոյական ոլորտից, անգամ ընտանիքի ու բարոյականության հարցը՝ որպես այդպիսին, դուրս է գրողի տեսադաշտից: Զոհրապի նովելներից և ոչ մեկում չենք հանդիպի կնոջ ազատության, նրա հասարակական դերի, սեռերի իրավահավասարության

գաղափարին: Գրողը կնոջը դիտում է որպես կենսաբանական էակ, որի վարքը պայմանավորված է կենսաբանական պատճառներով և վերլուծում է նրա հոգեբանական շարժումները: Կանանց խնդիրները քննաբանվում են գոյի իմացաբանական չափանիշներով, որոնց մեջ առաջնային են կնոջ հոգեբանության փիլիսոփայական հիմքերի ընկալումները: Զոհրապի կենսափիլիսոփայությունը աշխարհի ու կյանքի բազմազանության իմացաբանական ու հոգեբանական շերտերի խորքերն է թափանցում, հայտնաբերում հոգեբանության նրբագույն դրսևորումներ և այդտեղ տեղադրում նաև կնոջ էությունը՝ հերոսուհիների վարքագծի բացատրությունը բխեցնելով կենսաբանական գործոնի, բնության, բնական գրգիռների վճռորոշ առաջնայնության գաղափարից: Հենց այս հանգամանքն է, որ արժեքայնության աստիճանի է բարձրացնում կնոջ ֆենոմենը՝ նոր նշանակություն տալով կնոջ՝ որպես անհատի, կենսահոգեբանական կառուցվածքի հետազոտությանը, քանի որ իբրև սկիզբ ուներ կնոջ ազատ կամքի և կենսաբանական եսի ինքնագիտակցումը:

Կինը բանաստեղծ Զոհրապի համար սովորական էակ չէ, այլ գեղեցկության խորհրդանշան, գեղեցիկը տեսնելու և զգալու միջոց, բանաստեղծության աղբյուր: Ահա, թե ինչու նա կնոջ ամենաթանկագին հատկությունը համարում է նրա մարմնական ու հոգեկան գեղեցկությունը և այնքան վախենում է այդ գեղեցկության՝ կյանքի բանաստեղծության այդ աղբյուրներից մեկի, խաթարման համար: Իր այս միտքը Զոհրապն արտահայտել է շատ բովանդակալից թևավոր խոսքով. <<կինը ծիծաղ մըն է, պետք չէ, որ լացի փոխվի>>: Զոհրապի նկարագրած կանայք բոլորն էլ գեղեցիկ են, ճկուն, սլացիկ իրաններով: Նրանք եղնիկի աչքեր ունեն, ինչպես և <<թաքուն կայծակներով>> լի աչքեր: Կնոջ գեղեցկությունը ցույց տալու համար Զոհրապն ընդարձակ նկարագրություններ չունի. մի-երկու ուրվագիծ՝ կարծես անփութորեն և ժլատությամբ նետված կտավի վրա, բավական են գեղակերպ ընկալում առաջացնելու, իսկ հաճախ այդ ուրվագծերը միայն շրջանակ են ստեղծում, որի լրացումը թողնվում է ընթերցողին: Զոհրապի հերոսուհիները երբեմն բարձրահասակ են, մարմնեղ, ավելի հաճախ՝ նրբամարմին, սակայն ըմբոստ և լիքը կրծքով, առատ մազերով, որ հեղինակն ամենից ավելի է սիրում նկարագրել, ձյունաթույր և փոքրիկ թաթիկներով, մանրիկ ոտքերով, հաճախ վեհ, խրոխտ՝ նման արձանի, բայց զգացմունքի արտակարգ ջերմությամբ: Սակայն հեղինակը կնոջ գեղեցկությունը միայն արտաքին գեղի իմաստով չի հասկանում, այլև՝ հոգեկան: Նա իր կերպարների մեջ

կրքոտությամբ որոնում է հոգու գեղեցկությունը, օժտում է նրանց նաև այդպիսի գեղեցկությամբ:

Զոհրապի նկարագրած կանայք արտակարգ հմայք ունեն և սքանչելի են կանացի իրենց կեցվածքի մեջ, անտրոհելի ամբողջություն՝ իրենց հմայքի ու անգամ <<հոռի կողմերի>> ազատությամբ, նրա նկարագրած կանայք գեղեցիկ են, ճկուն, սլացիկ իրաններով: Կնոջ ամենաթանկագին հատկությունը գեղեցկությունն է: Կինը կյանքի ժպիտն է, որ մարդկային հոգու, գեղեցիկի և բանաստեղծության պահանջը տեսանելի առարկայի վրա բավարարելու հնարավորություն է ընձեռում: Զոհրապը հետևում է կյանքի անողոք ընթացքին, որը ուրույն կնիք է դնում կնոջ հոգեբանության վրա: Հույսի և սպասման մեջ էլ կինը դժբախտ է. նրա համար չկա երջանկություն նույնիսկ երազների մեջ:

Պատկերելով կնոջ սոցիալական կենսագրության այուժեն՝ Զոհրապը գրեթե բոլոր նովելներում նրան անջատում է կին-ամուսին հարաբերությունից և պատճառի և հետևանքի մեջ շեշտում կնոջ՝ որպես կենսաբանական էակի ներհատուկ բնազդի արթնացումը: Այստեղ է ահա թաքուն այն գրգիռը, որին Տիգրանուհին ակամա պիտի տեղի տար, քանզի բնությունը հզոր է կամքի դիմադրությունից: Տանտիրոջ որդու գայթանքները աստիճանաբար վերածվում են հաճույքի: Հոգեկան ի՜նչ խոր տառապանք է ապրում Տիգրանուհին: Անարգված, լքված կնոջ դառն վիճակի գիտակցության մեջ, շշմած անակնկալ հարվածից, կապոցը թևի տակ, լուռ, սմքած, փոքրացած իր վշտի ծանրության տակ, գնում է նա՝ շրջապատին անուշադիր և անտարբեր: Հեղինակը իր նկարագրությունների մեջ ամեն ինչ չի ասում, նա վրձնի արագ շարժումներով նետում է կտավի վրա մի քանի խոսուն ուրվագծեր, որով լարում է ընթերցողի երևակայությունը և ստիպում է իր հետ ստեղծագործել, և ահա ընթերցողը կարծես շոշափում է այդ վիշտը, կարծես տեսնում է Տիգրանուհու աչքերի մեջ քարացած արցունքը, որը հետո պիտի հալվի և առատորեն թափվի: Դրա համար նա դեռ շատ ժամանակ ունի, և ի՜նչ է մնում Տիգրանուհուն, եթե ոչ լալու սփոփանքը: Միակ լուսավոր կետը, թանկագին շղթան, որ կապում է նրան կյանքի հետ, մնում է իր զավակը՝ խորտակված կյանքի պտուղը, իսկ նրա մահից հետո՝ փոքրիկ շիրիմը: Ինչպի՜սի գորովալիր, կաթոգին զգացումներով է շրջապատում նա իր զավակին և, ապա նրա գերեզմանը: Հեղինակին հաջողվել է դրսևորել աշխատավոր կնոջ մայրական մաքուր զգացումը իր բարձրագույն արտահայտությամբ,

որի նկարագրության մեջ է նորավեպի հուզականության երկրորդ բարձրակետը: Այդ ապրումները նկարագրելիս ինքը՝ հեղինակը, նույնպես հուզվել է և հուզվել՝ անկեղծորեն: Այդ երևում է նրանից, որ սյուժեի ավարտումից հետո նա առանձնացրել է այդ ապրումների ակորդը և ընդլայնել, մեծացրել է նրա արձագանքը և իր հոգուն հատուկ խանդաղատանքով նկարագրել Տիգրանուհու մայրական զգացումի բովանդակ հարստությունն ու գեղեցկությունը: Տիգրանուհին մենակ է կատարում իր զավակի թաղումը. հագցնում, զարդարում, չնայած իր սուղ միջոցներին՝ պահանջում է շքեղ սպասավորում, դագաղ է պատրաստել տալիս, որ <<չմրսի>> իր փոքրիկը, և ինքը մենակ հետևում է դագաղին: Դրանից հետո նրա հոգսը և ուրախությունը դառնում է երեխայի գերեզմանը: Իր բոլոր վաստակածը նրա վրա է ծախսում, ցանկապատում է, գեղեցկությանը հոգ տանում: Մեռելոցի օրերը դառնում են Տիգրանուհու համար <<ցնծության օրեր>>, նա գնում է գերեզմանատուն, չոքում փոքրիկ շիրիմի մոտ և անխառն երանությամբ խոսում իր զավակի հետ՝ <<անոր մանուկի բարբառովը>>:

<<Փոստալի>>-ի գլխավոր կերպարները՝ Տիգրանուհին, Սուրբիկ Հանըմը և Հաճի Տյուրիկը, բոլորն էլ տիպականացված են, սակայն այդ կերպարներից առավել շոշափելի որոշակելիությամբ կերտված է Սուրբիկ Հանըմը: Զոհրապի մի շարք կերպարներն այնքան տիպական են, այնքան բնորոշ, հաճախ այնքան բազմակողմանի, որ թվում է, թե կերտված են ավելի մեծ կտավի մեջ: Սուրբիկը բազմահատված կերպար է, բարդ նկարագիր: Շահագործելը, կեղծիքը, խաբելը, ներքնախավերի վրա որպես շահագործման առարկայի նայելը, բուրժուական հոգեբանության հատուկ այս երևույթն այնքան են արմատացած այդ կնոջ մեջ, այնքան սովորական դարձած, որ սեփական իրավունքների ոտնահարում պիտի նկատվեր հակառակը մտածել տալը: Այդ է պատճառը, որ Սուրբիկի կեղծ զայրույթը Տիգրանուհու նկատմամբ հետզհետե վերածվում է <<անկեղծ>> զայրույթի:

Նկարագրելով կողք-կողքի Տիգրանուհուն և Սուրբիկին, հեղինակը մղում է ընթերցողին համեմատելու դրանց և համոզվելու, որ աշխատավոր ժողովրդի դուստրը մարդկային շատ ավելի բարձր արժանիքներ ունի, քան բարեգործի, բարեպաշտության և բարոյականության եռաշերտ դիմակի տակ թաքնված Սուրբիկը: Սուրբիկը և Տիգրանուհին հակադրություններ են, ո՛չ միայն իրենց սոցիալական դրությամբ, նրանք նկարագրի հակոտնյա բևեռներ են նաև իրենց մարդկային արժանիքներով: Առաջինը կեղծիքի, անբարոյականության,

գիշատիչի հատկությունների մարմնացումն է, իսկ երկրորդը՝ մանկական միամտության, բարոյական մաքրության, մայրական բյուրեղյա ջինջ ու ջերմ զգացումների:

Կորսված կյանքի նույնպիսի մի ճակատագիր է վիճակվում <<Այրին>> նովելի հերոսուհուն: Տակավին չճաշակած կյանքի հաճույքը՝ Զարդարը պիտի երազեր վերադարձի կարոտը, իր մեջ զգար կնոջ զգացողությունների վայելքը, որ, ավա՜ղ, այդպես էլ մնաց անկատար: Զարդարի հույսերը տարիների հետ ջլատվում են, ցամաքում է նրա արցունքը, բայց նա դեռ սպասում էր: Նրան խորթ և անհասկանալի է կողմնակի սերը. նրա սիրտը, այդ նահապետական երկրի սովորությամբ, միայն մեկին կարող էր բացվեր: <<Այրին>> կնոջ դատին նվիրված լավագույն արտահայտություններից մեկն է մեր գրականության մեջ:

Հոգու առեղծվածները վերլուծող արվեստագետը շարունակում է սիրո թեմայի մեջ քննել կնոջ երջանկության խնդիրը: Զոհրապն ընտրում է լարված և բարդ հոգեվիճակներ, իր հերոսներին դնում է ծայրաստիճան դժվարին կացության մեջ, ենթարկում է ճակատագրական փորձության: Այս բոլորի պատկերման մեջ շատ հաճախ հանդես են գալիս հերոսների ներաշխարհի թաքուն, խորհրդավոր շերտերը, ենթագիտակցական մղումները, որոնք էլ պայմանավորում են դեպքերի զարգացման անսպասելի և անսովոր, հիրավի <<նովելային>> վախճանը՝ <<փոքր տարածության>> վրա ներկայացնելով կնոջ հոգեբանական առեղծվածների մի բարդ շղթա, որ գրեթե անվերծանելի է: Որքան անմեկնելի է կնոջ հոգու առեղծվածը, նույնքան անպատճառ է Պերճուհու ապաշխարության գաղտնիքը, որ հասկանալի է միայն իրեն (<<Այինկա>>): Մի ամբողջ տիեզերք է Զոհրապի պատկերած կանացիական աշխարհը: Եվ այդ աշխարհն ունի իր փիլիսոփայությունը՝ անհատի և հասարակության, սիրո և երջանկության, կյանքի ու մահվան գոյաբանական և իմացաբանական արժեքները: Այն, ինչը Զոհրապի հերոսները վերապրում են կյանքի էմպիրիկ ընթացքով, իրականում իմաստավորված է փիլիսոփայական հիմնավոր գիտակությամբ:

Հոգեբանական հանգույցների լուծումը կրկնութուն կլիներ, եթե նույնարժեք լինեին մարդկային անհատականության բանաձևերը: Յուրաքանչյուր կին երջանկության է ձգտում, բայց կյանքն ապրում է յուրովի՝ ըստ իր կենցաղավարության ու հոգեզգացական բնույթի: Այս զուգահեռի վրա են դիտված կինը <<Պարահանդեսին վաղորդայնը>>,

<<Սառա>>, <<Կարծեմ թե>>, <<Փոթորիկը>> նորավեպերում: Շատ դեպքերում Զոհրապը միախառնում է իրականն ու երազայինը, երկրայինն ու պատրանքայինը, պատկերում է կյանքն իբրև մի անիմաստ խաղ, հավերժական շրջապտույտ:

<<Մագդաղինե>> նորավեպը պարունակում է շատ ավելի համարձակ և ընդհանրացնող քննադատություն: <<Մագդաղինե>>-ն գրված է իր ժամանակի համար շատ առաջավոր միտումով, հասարակական-քաղաքական մտքի սրությամբ: Հեղինակն այստեղ քննադատում է բուրժուական հասարակության բարոյական սնանկությունը՝ ամենևին տարբերություն չդնելով անբարոյականի և այդ հասարակության ծաղիկը կազմող անդամների միջև: Պարզ ու սրտառուչ է Մագդաղինեի՝ այդ դեռատի աղջկա, փոքրիկ պատմությունը: Եվ հեղինակը, իբրև անբարոյականության սոցիալական պատճառները պարզելու, ինչպես և իր հերոսուհուն ընթերցողին հարազատ դարձնելու միջոցներից մեկը, նրան պատմել է տալիս իր կյանքի պատմությունը: Ընդամենը մի քանի տող է այդ պատմությունը, բայց որքա՜ն հուզական և համակրանք ստեղծող: Այդ հուզականությունը և համակրանքը դեպի իր հերոսուհին ստեղծված է նաև նրա էությանը, նրա նկարագրին բնորոշ լեզվով: Մագդաղինեն խոսում է կրկնողությամբ, հատիկ-հատիկ արտահայտելով իր մտքերը, փոքրացուցիչ մասնիկներով, որով հեղինակը ուզում է ցույց տալ Մագդաղինեի գրեթե երեխա լինելը, նրա անմեղությունը, պարզ, անարվեստ վարվեցողությունը, ինչպես և զոհաբերության պատրաստակամությունը: Մագդաղինեի հոգածության տակ էին եղբայրը, քույրն ու մեծ մայրը. ամենքին նա էր պահում: Ահա անբարոյականության սոցիալական պատճառը. այդպես էլ ըմբռնում է հեղինակը: Նա անբարոյականությունը համարում է սոցիալական երևույթ: Հացի խնդիրն է, անողոք կարիքը, որ Մագդաղինեին ստիպել է վաճառքի հանել այդ հասարակության մեջ իր ունեցած միակ արժեքը, իր մարմինը: Հեղինակը նրան չի մեղադրում, ընդհակառակն, նա օժտում է իր հերոսուհուն մարդկային լավագույն գծերով, ցույց է տալիս, որ Մագդաղինեն այդ անբարոյականության մեջ անգամ պահպանել է իր հոգեկան մաքրությունը, իր միամտությունը, որ նա ընդունակ է գերագույն անձնազոհության, առանց նույնիսկ գիտակցելու իր զոհողության մեծությունը, որ նա պարզապես սոցիալական պայմանների զոհ է:

ԿՆՈՋ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՐԱՖՖԻԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐԸ

Մարդկային հասարակության պատմության մեջ ուրույն տեղ է գրավում կնոջ հիմնահարցը: Լինելով երկու սեռերից մեկի կրողը՝կինը դարեր շարունակ ենթարկվել է խտրականության: Կնոջ նկատմամբ պատմական այդ մեծ անարդարությունը չէր կարող անվերջ շարունակվել: Առաջադեմ մարդիկ դարեր շարունակ բարձրաձայնել են կնոջ ազատագրության, իրավահավասարության հաստատման, խտրականության վերացման հարցերը: Հայ իրականության մեջ նշյալ խնդրին մեծ ուշադրություն հատկացնող մտածողների շարքում նշանակալից դերակատարություն ուներ Րաֆֆին: Գրողը բարձրացնում է կյանքի նպաստավոր պայմանների ապահովության, նահապետական հետամնաց կապանքներից ազատագրելու խնդիրը: Հոգեբանական նուրբ զննումներով է Րաֆֆին բացահայտում գավառի կնոջ խորհրդավոր ու գեղեցիկ աշխարհը, թափանցում նրա ներքին ծալքերի մեջ, պատկերագրում ներքին հակասությունների ու ցավերի մի լուռ աշխարհ,ուր մաքուր, անձնվեր սերը գունաթափվում ու խամրում է երազանքների ու համակերպումի լուռ բախումից, ուր ծաղկող հոգու պոեզիան հաճախ է աղարտվում շրջապատի անողոք ու սառը միջամտությունից, ամուսինների ու ծնողների կամայականություններից: Ավանդական կենցաղի լուսավոր ու ստվերոտ կողմերի նկարագրությամբ Րաֆֆին կնոջ լիակատար ազատագրության խնդիր չի դնում. ազատագրել կնոջը նահապետական հետամնաց կապանքներից, սակայն պահպանել նրա մեջ դարերով սրբագործված ավանդական լավագույն գծերը: Խնդրի դրվածքն այդպիսին է նաև Մուրացանի <<Խորհրդավոր միանձնուհին>> վեպում: Ցույց տալով կնոջ ծանր վիճակը՝ Րաֆֆին դրա արմատները որոնում է նրա տգիտության ու անկրթության մեջ: Նա զուրկ է ձայնի իրավունքից ընտանիքում և հասարակության մեջ,նրան ընդունում են որպես սեփականություն,որը իրավունքներ չունի: Կանանց փոխհարաբերություններն ունեին հիերարխիկ բնույթ: Առավել մեծ իրավունք ուներ մեծ մայրը, որը ավանդական մշակույթում ներկայացնում էր կին-լիդերի իրական կերպարը: Ընտանիքի իգական սեռի անդամների մեջ ամենաիրավազուրկը, ինչպես նկատում է Րաֆֆին, նորահարսներն էին, որոնց նկատմամբ արգելքներն ամենաշատն էին ու ամենախիստը: Վերջիններս զրկված էին ազատ տեղաշարժվելու, հաղորդակցվելու և արտահայտվելու իրավունքից:

Նա ցույց է տալիս,որ հետամնաց կյանքը, չարքաշ աշխատանքը ստիպում են գյուղացուն մեծ գերդաստաններով ապրել, որպեսզի աշխատանքը ավելի արդյունավետ դառնա:Գերդաստանի ամբողջության շահը պահանջում է, որ կանայք ենթարկվող լինեն,որպեսզի իրենց վեճերով չպառակտեն մի քանի ընտանիքներից բաղկացած աշխատանքային այդ միավորումը:Այս հանգամանքը ստեղծել է բարոյական յուրատեսակ մի պատկերացում,ըստ որի կնոջ արժեքը նրա հնազանդության,կրավորական լինելու մեջ է:<<Հայ կինը>> հոդվածում իր հետազոտությունը Ռաֆֆին սկսում է գյուղացի կնոջից, նրա իսկ ծնունդից: Հասարակության մեջ գործող կարծրատիպերն այնքան ուժեղ էին, որ եռբ ընտանիքում աղջիկ էր ծնվում, այդ ընտանիքի բարեկամները չէին գնում շնորհավորելու, կամ, ինչպես ասում են, <<աչքալուսանք>> տալու ծնողներին: Սակայն առավել ցավալի է, որ այդ նույն աղջիկը, որն ամեն ինչից զրկված է եղել, մայր դառնալով, իր դստեր հետ ճիշտ նույն կերպ է վարվում: Ռաֆֆու հոդվածում տեղ է գտել մի զարհուրելի փաստ . աղջկա մահը մեծ բավականություն էր պատճառում ծնողներին, քանի որ նա ավելորդ բեռ էր համարվում: Աղջիկներն ու կանայք չափազանց շատ էին կաշկանդված իրենց գործողությունների մեջ: Գյուղացի աղջկա ամուսնությունը իրենից ոչնչով կախված չէր, փաստում է Ռաֆֆին: Գուցե զարմանալի թվա, բայց աղջկան երբեմն ամուսնացրել են , երբ նա դեռ մոր արգանդից լույս աշխարհ չի եկել կամ էլ դեռ օրորոցում էր:

Սառայի կերպարի արդիական վերլուծությունը «Սպանված աղավնի» վիպակում

11-րդ դասարանում փնտրում եմ մեկին, ով կարդարացնի Սառային, և հակառակ Նար-Դոսի ջանքերին, որ վիպակում մեղադրում է տվյալ հասարակությանը, այս կերպարը խոցելի կողմեր ունի, որն էլ առիթ տվեց տարբեր մեկնաբանությունների: Չնայած գրողի նկարագրած ժամանակաշրջանից մինչև մեր օրերը հասարակությունը որոշակի զարգացում է ապրել, սակայն նրա արծարծած խնդիրներն առկա են նաև մեր օրերում: Ե՛վ սպանված աղավնին, և՛ անմեղությունը կորցրած Սառան Թուսյանի զոհերն են, իսկ նա անուղղելի ստահակ է և չունի սեփական մեղքի գիտակցություն: Բայց մի՞թե մեր օրերում աղջիկները չեն խաբվում, կամ ինչպե՞ս կվարվեին նրանք՝ այդպիսի իրավիճակում հայտնվելով: Իսկ գուցե նաև մեր աշակերտները կարո՞ղ են խորհուրդներ տալ...

«Սառայի մեղավորությունը կայանում է նրանում, որ նա շատ շուտ գայթակղվեց այդ երիտասարդով և հավատաց նրա սուտ խոստումներին: Ես նրան խորհուրդ կտայի սառը դատեր և ոչ թե սպաներ իր անմեղ երեխային: Նա կարող էր ապրել իր կյանքով, աշխարհը Թուսյանով չէր սկսվում և ոչ էլ նրանով էր վերջանում, Աստված նրան նոր կյանքով ապրելու հնարավորություն էր տվել» /Մանուչարյան Կիմա/: «Ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ Սառային: Երբեմն փորձում եմ արդարացնել նրան, որ այն փոքրիկին սպանել է, որպեսզի փրկի նրան կյանքի դաժան խաղից, որ հանկարծ կյանքը նրան չկործանի, բայց ո՛չ... Այն անմեղ էակը ինչո՞վ էր մեղավոր, որ վճարեց իր կյանքի գնով, մի՞թե Սառայի սրտում մարել էր մայրական սերը, այդ նա՞ չէր, որ այնքան ծանր տարավ հասարակ թռչունի մահը: Բայց Աստված պատժեց նրան՝ խլելով նրա կյանքը, և նրա հետ տարավ նաև կրծքի տակ գտնվող երկրորդ երեխային» /Մարկոսյան Անգին/:

«Իմ կարծիքով, մեր օրերում Սառայի վիճակում հայտնվողները նրա նման չէին վարվի: Կարևոր չէ որտեղ կապրեին, բայց իրենց երեխայից չէին զրկվի:

Ինչու՞ «Անավարտ թռիչք» ֆիլմի հերոսուհին՝ Արևիկը, որ նույն վիճակում էր հայտնվել, կարողացավ պաշտպանել իր երեխային ու անցավ տարբեր փորձությունների միջով: Ես Սառային մեղադրում եմ իր թուլության պատճառով: Նաև նրան խորհուրդ կտայի մի քիչ ինքնասիրություն ունենալ և նորից չվազել իրեն դավաճանած ու լքած տղամարդու հետևից» /Կիրակոսյան Հայկուհի/: «Սառան պետք է փորձեր նոր կյանք սկսեր, մանավանդ, որ նրան այդ հնարավորությունը տրվել էր, և նա ամուսնացել էր, իսկ թուսյաններին կյանքն ինքնիրեն կպատժեր: Մեր օրերում Սառայի վիճակում հայտնվողները չէին կորցնի հոգեկան հավասարակշռությունը և չէին դառնա որդեսպան» /Կիրակոսյան Անահիտ/:

Եվ որքան էլ գրողը համամիտ լիներ Սառայի՝ հասարակությանն ուղղված մեղադրանքին, թե ինչու է այդ հասարակությունն իր մեջ հանդուրժում Թուսյանի նման սրիկաների գոյությունը, միևնույն է, մերօրյա աշակերտության ընկալումներում Սառային ուղղված մեղադրանքներն այնքան շատ էին, որ նրան արդարացնելու հազվագյուտ միտումներն անգամ դատապարտվեցին: Եվ աղջիկներին ուղղված իմ հարցը, թե իրենք կցանկանայի՞ն Սառայի ամուսնու՝ Գարեգին Սիսակյանի նման կյանքի ընկեր ունենալ, անհնարին է նկարագրել, թե ինչ ժխտողական վերաբերմունք արտահայտեցին, որով հաստատվում էր, թե մեր օրերի աղջիկներից ոչ մեկն էլ չէր ցանկանա հետագայում իր կողքին տեսնել

անվճռական, թույլ բնավորության տեր տղամարդու: Եվ չնայած գրողը վարպետորեն հաջողված գեղարվեստական կերպարներ է ստեղծել, բայց ի տարբերություն նախորդ տարիների մեր աշակերտների վերլուծություններին, որ առանձնացվում էին Սառային մեղադրող և արդարացնող խմբերը, այս անգամ համարյա բոլոր աշակերտներն էլ արտահայտեցին իրենց մեղադրանքը խաբված աղջկա և լքված կնոջ ողբերգությունն ապրած հերոսուհու հանդեպ:

Հետաքրքրիր էր, ի՞նչն էր փոխվել՝ կյա՞նքը, մեր միջավա՞յրը, թե՞ նոր սերնդի մտածելակերպը, մի բան, որ խորհելու տեղիք է տալիս:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ես այսքան հետազոտելուց հետո միայն կարող եմ ավելացնել այն և նաև եզրակացնել, որ կյանքն առանց կանանց չէր լինի, որովհետև ինչքան կարևոր գործեր և դերեր ունեն կանայք առհասարակ կյանքում և հատկապես պատմության մեջ: Ես այս հոդվածը պատրաստելուց, հետազոտելուց հետո ավելին քան համոզվեցի, որ կան կանայք, ովքեր ավելի խելացի, տրամաբանող և կայացած են, քան որոշ տղամարդիկ: Կինը իր դերը ունեցել է և՛ քրիստոնեության մեջ, և՛ քաղաքակրթության, և՛ ընդհանուր պատմության, և՛ հասարակության: Այնուամենայնիվ հարց է առաջանում՝ ո՞րն է կնոջ դերը:

Իրականում կինը որևէ հստակ դեր չունի: Նրա դերը կախված է հասարակության կառուցվածքից և կնոջը ընձեռած հնարավորություններից: Կանայք կարող են արտաքին քաղաքականություն մշակել, պատերազմ մղել, տնտեսության տարբեր ոլորտներ ղեկավարել և այլ գործերով զբաղվել, պարզապես նրանց պետք է ընձեռվի այդ հնարավորությունը: Իսկ որքան շատ են այդ հնարավորությունները, այնքան ավելի շատ է հասարակությունը շահում դրանից և ավելի հզոր է դառնում պետությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրիգոր Զոհրապ, Նովելներ .Երևան 1978թ.
2. Ղազարոս Աղայան, Հեքիաթներ, «Արևիկ» 2015թ.
3. Նար – Դոսի «Սպանված աղավնի» վիպակը, 11-րդ դասարանի դասագիրք
4. http://www.ysu.am
5. http://hetq.am